ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2014 թվականի N 458-Ա

1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՆԱԻՐԻԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթների, 1999 թվականին ծնված և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիներին զորակոչային տեղամասում կցագրման աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու համար՝ **որոշում եմ.**

1. 2015 թվականի ընթացքում՝ 1999 թվականին ծնված, 16 տարին լրացող և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիների կցագրումն անցկացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Նաիրիի զինվորական կոմիսարիատում:

2. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյան,

2) Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ մասնագետներ՝

ա. թերապևտ	Վ. Սարգսյան,
բ. վիրաբույժ	Ռ. Մկրտչյան,
գ. ակնաբույժ	Լ. Ավետիսյան,
դ. քիթ-կոկորդ-ականջ	Ա. Խալաթյան,
ե. նյարդաբան	Հ. Կարապետյան,
զ. սրտաբան	Փ. Արեստակյան,
է. հոգեբույժ	Ա. Մանուկյան,
ը. մաշկավեներ աբան	Ա. Կառավարիչյան,
թ. բուժքույր	Ս. Օհանջանյան:

3. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի:

5. <<Նաիրիի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Նազարյանին՝

1) ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

2) ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ զույգով, սարքավորումներով և դեղորայքով:

6. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել բոլոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

7. Առաջարկել համայնքների ղեկավարներին և հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Նաիրիի զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

8. Սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Գևորգյանի վրա:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վ. Գալոյանի վրա:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի դեկտեմբերի 29
ք. Հրազդան